

Մարատ Հայրապետյան
Մարտակերտի շրջանի Վաղուհասի Գ. Մուրադյանի անվան միջնակարգ
դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ



«Ինչո՞ւ են մարդու իրավունքները կարևոր.
Իմ ապրած իրականությունը և Չաբել Եսայանի
փորձառությունը»



Իրավունք... բառ, որ պարբերաբար հնչում է յուրաքանչյուր մարդու շուրթերից: Հարց է առաջանում՝ ի՞նչ է իրավունքը: «Իրավ» նշանակում է ճշմարիտ, իրավացի՝ արդար լինել:

Իրավունքը նախ և առաջ ծագում է մարդու գիտակցության մեջ, այնուհետև ամրագրվում օրենքում: Օրենքը գոյություն է ունեցել միշտ և բացահայտել է կյանքի կարգը՝ բարու և արդարության հասկացություններին համապատասխան:

Այսօր ուսումնասիրում ենք մի շարք սահմանված իրավունքների ամենատարբեր վերլուծությունները և տեսնում, որ բոլոր ժամանակաշրջաններում էլ երկրի և հասարակության հոգսերով ապրող անհատները փորձել են գտնել ուղիներ՝ մարդկային տարբեր խմբերի հարաբերությունները կարգավորելու համար: ԵՎ միայն

1948 թվականի դեկտեմբերի 10-ին Փարիզի Շայո պալատում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի երրորդ նստաշրջանի ժամանակ 217A որոշմամբ ընդունվեց ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների կողմից առաջարկված մի փաստաթուղթ, որը պատմության մեջ մտավ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» անվանումով: Այդ փաստաթուղթը նպատակ ունի ստեղծել այնպիսի աշխարհ, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքի ազատությունը և զերծ կլինեն վախից ու կարիքից: Մարդու իրավունքների առաջին նախագահ Էլենորա Ռուզվելտը, ով մշակել է Հռչակագիրը, հայտարարում էր, որ այն ամենուր կարող է դառնալ միջազգային ազատությունների մեծ խարտիա բոլոր մարդկանց համար:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք օրենքը մինչ Հռչակագրի ընդունումը և ընդունելուց հետո միշտ պահպանե՞լ է իրավունքի հավասարության նժարը:



Զաբել Եսայան (1878-1943)

Ընթերցելով Զաբել Եսայանի «Միլիդարի պարտեզները» ստեղծագործությունը՝ ստանում եմ բոլոր հարցերիս պատասխանները: Եթե օրենքն ապահովում էր հավասարության նժարը, ապա ինչո՞ւ ենիշերների հարձակումից տասնչորս տարեկան աղջկա դեմքը տեսնելը համարվեց աղջկա հեղինակության վնասում, և այդ «անպատվությունից» փրկելու միակ միջոցը վարձկան միջնորդի օգնությամբ նրան ամուսնացնելն էր: Կամ ինչո՞ւ փոքրիկ Զաբելը մանկության հեքիաթը վայելելու փոխարեն պիտի երազեր տղա լինելու մասին. «Երանի՛ տղա լինեի, լինեի չերքեզ, գող, ավազակ, ապաստանեի լեռներում: Ես կպայքարեի հանուն ազատության և ուրախությամբ կմեռնեի»:



Ինչու՞ մանկապարտեզի վարժուհին, որի հիմնական գործը պիտի լիներ փոքրիկների հոգում լույսի շողեր սերմանելը, իր համար հիմնական նպատակ էր դարձրել մանուկներին լուռ ու անշարժ պահելը, և դրան հասնելու համար չէր վարանում ծեծել ու ահաբեկել երեխաներին: Կարդալ ու գրել սովորեցնում էին Կարապետ աղայի մեթոդներով՝ ավանդական այբբենարանով, իսկ փոքրիկներին մեր մեսրոպյան սրբազան տառերը գազանիկներ էին երևում արցունքների ամպի ետևում:

Եվ եթե փորձեմ համեմատել իմ ապրած իրականության հետ, դժվար թե ընդհանուր եզրեր գտնեմ: Իմ մանկությունը հիշելիս դեմքիս ժպիտ է հայտնվում: Հիշում եմ իմ առաջին ուսուցչուհուն, ով բարի աչքերով նայում էր ինձ, բռնում ձեռքս և օգնում գրել մեսրոպյան տառերը, ոչ թե Կարապետ աղայի մեթոդներով, այլ մայրաբար:

Նայում եմ շուրջս նստած դասընկերուհիներին, ովքեր վախից չեն ծածկում իրենց դեմքերը պաշտպանական քողի տակ, և ուրախ եմ, որ չեն արժանանա Լուսիկ տատիկի բախտին, քանի որ ապրում ենք մի երկրում, որի Սահմանադրության հիմնասյուները ժողովրդավարությունն ու պաշտպանված քաղաքացիներն են: Ճիշտ է, մեր պետությունը դեռևս միջազգայնորեն չճանաչված պետություն է, սակայն յուրաքանչյուր հայի համար սահմանադրորեն փաստացի անկախ է, ուր քաղաքացին իրեն պաշտպանված է զգում:

Ես զգում եմ, որ ապրում եմ օրենքի երկրում, որտեղ կարևորը մարդու իրավունքներն են: